

Համարը	N 280-Ն	Տեսակը	Ինկորպորացիոն
Տիպը	Հրաման	Կարգավիճակը	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԳՏ 2011.05.23/11(394).1 Հնդունման վայրը Հոդ.209.5	Ընդունման ամսաթիվը	Երևան
Ընդունող մարմինը	Կրթության նախարար	և գիտության Ընդունման ամսաթիվը	05.04.2011
Ստորագրող մարմինը	Կրթության նախարար	և գիտության Ստորագրման ամսաթիվը	05.04.2011
Վավերացնող մարմինը		Վավերացման ամսաթիվը	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	02.06.2011	Ուժը կորցնելու ամսաթիվը	

☒ Կապեր այլ փաստաթղթերի հետ

[10.07.2009 ՀՕ-160-Ն ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ](#)

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

Մայր փաստաթուղթ: [ԿրթԳտՆԽ, 05.04.2011, N 280-Ն](#)

Մայր փաստաթղթին փոփոխող փաստաթղթերը՝

Համապատասխան ինկորպորացիան՝

[ԿրթԳտՆԽ, 28.12.2011, N 1347-Ն](#)

ԿրթԳտՆԽ, 05.04.2011, N 280-Ն

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«*Գրանցված է*»

ՀՀ արդարադատության

նախարարության կողմից

12 մայիսի 2011 թ.

Պետական գրանցման թիվ 11011218

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

5 ապրիլի 2011 թ.

N 280-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 25 կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրությունը, նախարարության աշխատակազմի կառուցվածքը, նախարարության աշխատակազմին հանձնվող

գույքի կազմը և չափը հաստատելու մասին» N 1579-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 30-ի «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների միջոցառումների համալիր ծրագիրը հաստատելու մասին» N 1806 Ա/Ք հրամանը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման» կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Ն. Հովհաննիսյանին և իրավաբանական վարչության պետ Մ. Գրիգորյանին՝ հրամանը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին:

Ա. Աշոտյան

Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2011 թվականի ապրիլի 5-ի
N 280-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ՀՀ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1) Սույն կարգը ընդունվել է ՀՀ կառավարության Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշմանը համապատասխան:

2) Սույն կարգով սահմանվում են դպրոցականների առարկայական օլիմպիադաների (այսուհետ՝ Օլիմպիադաներ) կազմակերպման և անցկացման հետ կապված՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, օլիմպիական խորհրդի, հանրապետական, մարզային, տարածքային և դպրոցական կազմկոմիտեների, առարկայական հանձնաժողովների և դպրոցականների փոխհարաբերությունները:

3) Օլիմպիադաները անցկացվում են հանրակրթական 16 առարկաներից (հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, ինֆորմատիկա, աստղագիտություն, հայ առաքելական եկեղեցու պատմություն, ՆԶՊ)՝ 4 փուլով.

ա) առաջին փուլ՝ ներդպրոցական,

բ) երկրորդ փուլ՝ տարածքային (նախկին վարչական շրջաններում, Երևան քաղաքում՝ վարչական շրջաններում),

գ) երրորդ փուլ՝ մարզային (Երևանի քաղաքային),

դ) չորրորդ փուլ՝ հանրապետական օլիմպիադան պետական նշանակության միջոցառում է, որը կազմակերպում և վերահսկում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն),

ե) 2012 թվականի դպրոցականների առարկայական օլիմպիադան «Մաթեմատիկա» առարկայից կազմակերպվում է 3 փուլով՝ համաձայն նախարարության սահմանած ընթացակարգի:

2. Օլիմպիադաների հիմնական սկզբունքներն են.

1) Օլիմպիադաների մարդասիրական բնույթը, ազգային համամարդկային արժեքների, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը,

2) Օլիմպիադաների հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին,

3) Օլիմպիադայում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը,

4) Օլիմպիադաներում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը:

3. Օլիմպիադաների նպատակներն ու խնդիրներն են.

1) Տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություն ունեցող երեխաների հայտնաբերումը և նրանց հետ անհատական աշխատանքի կազմակերպումը,

2) Ուսումնական առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրությունների զարգացումը և այդ առարկաներից խոր ու կայուն գիտելիքներ ստանալուն նպաստելը,

3) Առարկայական խմբակների, նախասիրական պարապմունքների և այլ ուսումնական աշխատանքների խթանումը,

4) Ստեղծագործ ուսուցիչների, բուհերի դասախոսների, գիտահետազոտական հիմնարկների աշխատակիցների և ուսուցիչների ներգրավումը օժտված երեխաների հայտնաբերման ու ուսուցման գործում,

5) Հայաստանի Հանրապետության՝ միջազգային օլիմպիադաներին, մրցույթներին մասնակցող թիմերի ձևավորումը և նրանց հետ աշխատանքի կազմակերպումը:

4. Օլիմպիադաների կառավարումը.

1) Օլիմպիադաների կազմակերպման քաղաքականությունը մշակելու և իրականացնելու նպատակով՝ որպես օլիմպիադաների կառավարման բարձրագույն մարմին, ՀՀ ԿԳ նախարարի հրամանով ստեղծվում է մշտական գործող հանրապետական օլիմպիական խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ): Խորհրդի աշխատակարգը հաստատում է ՀՀ ԿԳ նախարարը: Խորհրդին կից կարող են գործել մասնագիտական առարկայական աշխատանքային խմբեր:

2) Օլիմպիական խորհրդի կազմում ընդգրկվում են ՀՀ ԿԳ նախարարը (նախագահ), նախարարության հանրակրթության ոլորտը համակարգող նախարարի տեղակալը, հանրակրթության վարչության աշխատակիցներ, մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության պետեր կամ տեղակալներ, օլիմպիադաներում առաջատար հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններ, բուհերի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

3) Օլիմպիադաները նախապատրաստելու և անցկացնելու նպատակով ստեղծվում են հանրապետական, մարզային, տարածքային, դպրոցական օլիմպիական կազմկոմիտեներ և առարկայական հանձնաժողովներ: Հանրապետական կազմկոմիտեի և առարկայական հանձնաժողովների անվանական կազմը նախարարի հաստատմանն է ներկայացնում հանրակրթության վարչությունը: Մարզային (Երևանի քաղաքային) ու տարածքային

կազմկոմիտեների և առարկայական հանձնաժողովների անդամների անվանական կազմը հաստատում է մարզպետը (Երևանի քաղաքապետը) կրթության վարչության ներկայացմամբ: Դպրոցական կազմկոմիտեի և առարկայական հանձնաժողովների կազմը հաստատում է տնօրենը:

5. Օլիմպիական խորհրդի գործառույթները.

1) Մշակում է օլիմպիադաների նախապատրաստական աշխատանքների իրականացման, անցկացման, բողոքարկման ընթացակարգերը, ինչպես նաև վերահսկողության իրականացման, լուսաբանման, թափանցիկության և մասսայականության ապահովման մեխանիզմները:

2) Սահմանում է կազմկոմիտեների և առարկայական հանձնաժողովների ձևավորման սկզբունքները, նրանց պարտականություններն ու իրավունքները:

3) Մշակում է օլիմպիադաների անցկացման ժամանակացույցը կազմելու սկզբունքները, օլիմպիադաներին աշակերտների մասնակցության տարիքային սանդղակը, սահմանում քվոտաների (սահմանված թվաքանակ) տրամադրման կարգը:

4) Ուսումնական տարվա համար կազմում է օլիմպիադաների տարեկան ծրագիրը, մշակում հեռանկարային ծրագրեր:

5) Մշակում է մասնագիտական առարկայական աշխատանքային խմբերին մեթոդական գրականության ստեղծման և հրատարակման, ինչպես նաև խնդիրների, առաջադրանքների կազմման և գնահատման մեթոդաբանության մշակման գործում:

6) Աշխատանքային խմբերի օգնությամբ հրապարակում է նախորդ տարիների օլիմպիադաների խնդիրները և լուծումները, մարզային և հանրապետական փուլերի հաղթողների ցուցակները:

7) Սահմանված կարգով ներկայացնում է առաջարկություններ ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների անցկացման կարգում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

8) Առաջարկություններ է ներկայացնում հայ անվանի գիտնականների հոբելյանական օրերին նվիրված կամ ՀՀ-ում միջազգային և այլ օլիմպիադաների կազմակերպման վերաբերյալ:

9) Մշակում և իրականացնում է անհատների ու տարբեր կազմակերպությունների կողմից օլիմպիադաներին աջակցության ծրագրեր:

10) Ուսումնական տարվա վերջում քննարկում ու վերլուծում է օլիմպիադաների արդյունքները, տալիս է համապատասխան գնահատական և առաջարկություններ, խրախուսման է ներկայացնում կազմկոմիտեների և առարկայական հանձնաժողովների անդամներին:

11) Մշակում և իրականացնում է միջազգային օլիմպիադաներում մեր աշակերտների ձեռքբերումների լուսաբանմանն ու օլիմպիադաների թափանցիկության նկատմամբ հանրության վստահության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

12) Քննարկում է առարկայական օլիմպիադաների հանրապետական հանձնաժողովների նախագահների անվանական կազմը և ներկայացնում ՀՀ կրթության և գիտության նախարարի հաստատմանը:

13) Մշակում է օլիմպիական թիմերի հավակնորդների ընտրության, ուսումնական տարվա ընթացքում նրանց հետ իրականացվող նախապատրաստական դասընթացների և հավաքների կազմակերպման ու ֆինանսավորման կարգը:

6. Հանրապետական կազմկոմիտեի գործառույթները.

1) Սահմանում է մարզային փուլի անցկացման ժամկետները՝ ըստ առարկաների,

2) Սահմանում է հանրապետական փուլի անցկացման վայրերը և ժամկետները՝ ըստ առարկաների,

3) Նախապատրաստում է հանրապետական փուլի կազմակերպումը՝ համաձայն սահմանված ընթացակարգի,

4) Սահմանում է հանրապետական փուլի մասնակիցների թիվը՝ ըստ առարկաների և մարզերի,
5) Վերահսկում է հանրապետական փուլի անցկացումը և խրախուսման ներկայացնում հաղթողներին,

6) Վերահսկում է մարզային փուլի անցկացումը,

7) Նախարարի հաստատմանն է ներկայացնում հանրապետական առարկայական հանձնաժողովների և միջազգային օլիմպիադաներին մասնակցող թիմերի կազմերը:

7. Հանրապետական առարկայական հանձնաժողովների գործառույթները.

1) Համաձայն սահմանված ընթացակարգի՝ անցկացնում են հանրապետական փուլը և պատասխանատվություն են կրում անցկացման ողջ գործընթացի համար,

2) Կազմում են հանրապետական և մարզային փուլերի մրցութային առաջադրանքները,

3) Որոշում են հանրապետական փուլի հաղթողներին և նրանց պարգևատրում համապատասխան դիպլոմներով ու գովասանագրերով,

4) Համաձայն սահմանված ընթացակարգի՝ որոշում են միջազգային օլիմպիադաներին մասնակցող թիմերի թեկնածուների կազմը և նրանց հետ կազմակերպում լրացուցիչ աշխատանք,

5) Համաձայն սահմանված ընթացակարգի՝ հանրապետական կազմկոմիտեին առաջարկություն են ներկայացնում միջազգային օլիմպիադաներին մասնակցող թիմերի կազմերի մասին:

8. Մարզային կազմկոմիտեի գործառույթները.

1) Որոշում է մարզային փուլի անցկացման վայրերը՝ ըստ առարկաների,

2) Նախապատրաստում է մարզային փուլի կազմակերպումը՝ համաձայն սահմանված ընթացակարգի,

3) Վերահսկում է օլիմպիադաների անցկացումը և խրախուսման ներկայացնում հաղթողներին,

4) Առարկայական հանձնաժողովների երաշխավորության հիման վրա մարզային փուլի հաղթողներին ներկայացնում է մասնակցելու հանրապետական փուլին՝ ըստ քվոտաների:

9. Մարզային առարկայական հանձնաժողովների գործառույթները.

1) Համաձայն սահմանված ընթացակարգի՝ անցկացնում են մարզային փուլը և պատասխանատվություն են կրում ողջ գործընթացի համար,

2) Որոշում են մարզային փուլի հաղթողներին և նրանց պարգևատրում համապատասխան դիպլոմներով ու գովասանագրերով,

3) Մարզային կազմկոմիտեին առաջարկություն են ներկայացնում հանրապետական փուլին մասնակցող թիմերի մասին,

4) Կազմում են տարածքային և դպրոցական փուլերի մրցութային առաջադրանքները:

10. Տարածքային կազմկոմիտեի գործառույթները.

1) Սահմանում է տարածքային փուլի անցկացման ժամկետներն ու վայրերը՝ ըստ առարկաների,

2) Նախապատրաստում է տարածքային փուլի կազմակերպումը՝ համաձայն սահմանված ընթացակարգի,

3) Առարկայական հանձնաժողովների երաշխավորության հիման վրա տարածքային փուլի հաղթողներին ներկայացնում է մասնակցելու մարզային փուլին,

4) Վերահսկում է օլիմպիադաների անցկացումը և խրախուսման ներկայացնում հաղթողներին:

11. Տարածքային առարկայական հանձնաժողովների գործառույթները.

1) Անցկացնում են տարածքային փուլը և պատասխանատվություն են կրում ողջ գործընթացի համար՝ համաձայն սահմանված ընթացակարգի,

2) Որոշում են տարածքային փուլի հաղթողներին և նրանց պարգևատրում համապատասխան դիպլոմներով ու գովասանագրերով,

3) Տարածքային կազմկոմիտեին առաջարկություն են ներկայացնում մարզային փուլին մասնակցող թիմերի կազմերի մասին:

12. Դպրոցական կազմկոմիտեի գործառույթները.

1) Մահմանում է դպրոցական փուլի անցկացման ժամկետները՝ ըստ առարկաների,

2) Նախապատրաստում է դպրոցական փուլի կազմակերպումը՝ համաձայն սահմանված ընթացակարգի,

3) Առարկայական հանձնաժողովների երաշխավորության հիման վրա դպրոցական փուլի հաղթողներին ներկայացնում է մասնակցելու տարածքային փուլին,

4) Վերահսկում է օլիմպիադաների անցկացումը և խրախուսման ներկայացնում հաղթողներին:

13. Դպրոցական առարկայական հանձնաժողովների գործառույթները.

1) Անցկացնում են դպրոցական փուլը և պատասխանատվություն են կրում ողջ գործընթացի համար՝ համաձայն սահմանված ընթացակարգի,

2) Որոշում են դպրոցական փուլի հաղթողներին և նրանց պարգևատրում համապատասխան դիպլոմներով ու գովասանագրերով,

3) Դպրոցական կազմկոմիտեին առաջարկություն են ներկայացնում տարածքային փուլին մասնակցող թիմերի կազմի մասին:

14. Հանրապետական առարկայական օլիմպիադաների չորս փուլերի կազմակերպումը.

1) Առաջին՝ դպրոցական փուլը կազմակերպվում է դպրոցներում դեկտեմբեր-հունվար ամիսներին: Առաջին փուլին կարող է մասնակցել 5-12-րդ դասարանների ցանկացած աշակերտ: Առաջին փուլի կազմակերպման բոլոր ծախսերը հոգում են դպրոցները: Հաղթողները խրախուսվում և պարգևատրվում են դպրոցի տնօրինության կողմից:

2) Երկրորդ տարածքային փուլը կազմակերպվում է նախկին վարչատարածքներում:

Երկրորդ փուլին մասնակցում են տվյալ տարածքում գտնվող հանրակրթական բոլոր դպրոցների (անկախ իրավական կազմակերպման ձևից) կողմից ներկայացված 7-12-րդ դասարանների աշակերտները:

Երկրորդ փուլի կազմակերպման բոլոր ծախսերը հոգում են օլիմպիադան անցկացնող վարչական տարածքները (համայնքները):

Հաղթողները խրախուսվում և պարգևատրվում են վարչական տարածքի (համայնքի) ղեկավարության կողմից:

3) Երրորդ՝ մարզային (Երևանի քաղաքային) փուլը կազմակերպվում է մարզկենտրոններում (Երևան քաղաքում): Երրորդ փուլին մասնակցում են տվյալ մարզի տարածքային կազմկոմիտեների կողմից երաշխավորված աշակերտները.

հայոց եկեղեցու պատմությունից՝ 8-12-րդ դասարանների աշակերտները, մյուս առարկաներից՝ 9-12-րդ դասարանների աշակերտները:

Երրորդ փուլի կազմակերպման բոլոր ծախսերը հոգում են մարզպետարանները (Երևանի քաղաքապետարանը): Հաղթողները խրախուսվում և պարգևատրվում են մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) կողմից:

4) Չորրորդ՝ հանրապետական փուլին մասնակցում են մարզային կազմկոմիտեների կողմից երաշխավորված աշակերտները.

հայոց եկեղեցու պատմությունից՝ 8-12-րդ դասարանների աշակերտները, մյուս առարկաներից՝ 9-12-րդ դասարանների աշակերտները: Օլիմպիադայի չորրորդ փուլի կազմակերպման բոլոր ծախսերը հոգում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

Հաղթողները խրախուսվում և պարգևատրվում են նախարարության կողմից:

(14-րդ գլուխը փոփ. 28.12.11 N 1347-Ն)

15. Միջազգային առարկայական օլիմպիադաներին մասնակցող թիմերի ձևավորումը.

1) Հանրապետական օլիմպիադաների արդյունքները ամփոփելուց հետո հանրապետական առարկայական հանձնաժողովների առաջարկությամբ կազմվում է յուրաքանչյուր առարկայի հավաքական թիմի անդամների թեկնածուների ցուցակը՝ համաձայն սահմանված ընթացակարգի:

2) Սահմանված ընթացակարգով թեկնածուների հետ կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ: Նախարարի հրամանով՝ ըստ առարկաների հաստատվում են պարապմունքների կազմակերպիչները:

3) Պարապմունքներից հետո հանրապետական առարկայական հանձնաժողովի կողմից անցկացվում է մրցույթ(ներ): Այդ մրցույթի(ների) արդյունքների հիման վրա ձևավորվում են միջազգային օլիմպիադաներին մասնակցող հանրապետական թիմերի կազմերը և ներկայացվում են նախարարի հաստատմանը:

4) Թեկնածուների ընտրման, լրացուցիչ մրցույթների անցկացման և թիմերի ձևավորման աշխատակարգերը սահմանում է խորհուրդը:

5) Միջազգային օլիմպիադաների մասնակից թիմերի ղեկավարներին հանրակրթության վարչության ներկայացմամբ հաստատում է նախարարը:

6) Հայաստանի թիմերի միջազգային օլիմպիադաների մասնակցության հետ կապված ֆինանսական ծախսերը հոգում է նախարարությունը:

7) Միջազգային օլիմպիադաների հաղթողներին տրվող արտոնությունները սահմանվում են օրենսդրությամբ:

(Հավելվածը լրաց, փոփ. 28.12.11 N 1347-Ն)